



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

## Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

№ 8-2019

ք. Արտաշատ

06.02.2019թ.

### ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 7-րդ, 8-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ 1510-Ն որոշումը և մարզպետարանի քաղաքացիական ծառայողների 2018 թվականի երկրորդ կիսամյակի կատարողականի գնահատման դրական արդյունքները.

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի քաղաքացիական ծառայողներին պարգևատրել 2018 թվականի երկրորդ կիսամյակի կատարողականի արդյունքների հիման վրա Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 1515-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի պահպանման ծախսերի „Քաղաքացիական, դատական և պետական այլ ծառայողների պարգևատրում,, հոդվածով՝ համաձայն հավելվածի:

2. Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ Ն. Սիմոնյանին՝ կատարել վճարում:

Восстановимая подпись

X

ԳԱՐԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝

Подписано: SARGSYAN GARIK 2811870695

Գ. ՍԱՐԳՍՅԱՆ